

ՀՀ բանկային համակարգի 2012 թ-ի երկրորդ եռամսյակի գործունեության ամփոփում

2012 թ-ի երկրորդ եռամսյակի, ինչպես նաև ամբողջ 1-ին կիսամյակի ընթացքում համակարգը գործել է բնականոն հունով՝ ապահովելով գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով համեմատական բարձր աճ: Հաշվետու կիսամյակում համակարգի բանկերը, բացառությամբ չորս բանկի, կիսամյակը փակել են շահույթով. համակարգի կիսամյակային մաքուր շահույթը կազմել է մոտ 20.78 մլրդ դրամ, վնասը՝ 2.9 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 17.88 մլրդ դրամ, այդ թվում՝ երկրորդ եռամսյակում համակարգի շահույթը կազմել է մոտ 11.54 մլրդ դրամ, վնասը՝ 2.21 մլրդ դրամ, իսկ զուտ շահույթը՝ 9.33 մլրդ դրամ և եռամսյակը վնասով են փակել համակարգի երեք բանկեր:


Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2012 թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում աճել են 7.5 %-ով կամ 153.9 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 2,209.1 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ակտիվներն աճել էին 5.7 %-ով կամ 95.6 մլրդ դրամով: Ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 6.5 %-ով կամ 135.0 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա 1-ին կիսամյակում համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել էին 12.5 %-ով կամ 195.8 մլրդ դրամով: Տեղին է արձանագրել, որ համակարգի ընդհանուր ակտիվների նվազում էր գրանցվել այս տարվա առաջին եռամսյակում. այն կազմել էր մոտ 0.9 % կամ 18.9 մլրդ դրամ:


Վարկային ներդրումներ

Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 9.5 %-ով կամ 134.5 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 2.2 %-ով կամ 3.3 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 1,550.8 և 144.9 մլրդ դրամ, ընդ որում՝ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 5.9 %-ով կամ 79.0 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 10.3 %-ով կամ 13.9 մլրդ դրամով: Վերոնշյալին նաև ավելացնենք, որ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 9.0 %-ով կամ 96.9 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 7.5 %-ով կամ 9.4 մլրդ դրամով: 2012-ի հունիսի 30-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 68.9 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 65.5 %-ը կամ 1,016.0 մլրդ դրամ, և այս ցուցանիշն երկրորդ եռամսյակի ընթացքում աճել է 8.0 %-ով կամ 75.1 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 9.5 %-ի կամ 65.1 մլրդ դրամի դիմաց: Միևնույն ժամանակ նշենք, որ այս տարվա առաջին կիսամյակում վարկային ներդրումներն ավելացել են 16.0 %-ով կամ 213.5 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 7.9 %-ով կամ 10.6 մլրդ դրամով, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերն ավելացել են 15.3 %-ով կամ 135.0 մլրդ դրամով: Շարադրվածին միայն ավելացնենք, որ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել էին 6.8 %-ով կամ 60.0 մլրդ դրամով:

2012 -ի հունիսի 30-ի դրությամբ
վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2012 -ի երկրորդ եռամսյակի ընթացքում աճել են 9.1 %-ով կամ 38.0 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 455.7 մլրդ դրամ, ընդ որում՝ այս տարվա առաջին եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 7.7 % կամ 29.8 մլրդ դրամ: Համադրելու համար նշենք, որ անցած տարվա երկրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի ծավալն աճել էր 7.5 %-ով կամ 23.7 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 29.4 %-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 19.0 %-ը կամ 280.0 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 8.0 %-ը կամ 121.0 մլրդ դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 4.3 %-ով կամ 11.5 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 7.0 %-ով կամ մոտ 7.9 մլրդ դրամով, ընդ որում՝ ընթացիկ տարվա առաջին եռամսյակում նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել էին 7.5 % կամ 18.9 մլրդ դրամ և 1.4 % կամ 1.5 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ 2011 թ-ի երկրորդ եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի աճը կազմել էր 3.7 % կամ 7.9 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերինը՝ 4.1 % կամ 3.8 մլրդ դրամ: Հարկ է նաև նշել, որ ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել է 17.5 % կամ 67.8 մլրդ դրամ, այդ թվում՝ սպառողական վարկերինը՝ 12.1 %-ը կամ 30.3 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերինը՝ 8.4 %-ը կամ 9.4 մլրդ դրամ: Համակարգում սպառողական և հիփոթեքային վարկերի գծով արձանագրված աճերի դինամիկան հիմք է տալիս եզրակացնելու, որ առաջիկայում ևս կապահովվեն վերոնշյալ վարկատեսակների գծով համեմատաբար բարձր ցուցանիշներ:




Պարտավորություններ


2012-ի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 1,821.8 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 29.1 %-ով կամ 410.9 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 8.8 %-ով կամ 147.4 մլրդ դրամով, իսկ այս տարվա առաջին եռամսյակում այն նվազել էր 1.4 %-ով կամ 24.6 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու եռամսյակի ընթացքում աճել են 9.0 %-ով կամ 53.8 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 2.9 %-ով կամ 13.4 մլրդ դրամով և եռամսյակի վերջում համապատասխանաբար կազմել 650.5 և 475.4 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային աճը կազմել է 11.2 % կամ 51.6 մլրդ դրամ, ցպահանջ ավանդներինը՝ 1.6 % կամ 2.2 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդներինը՝ 5.8 % կամ մոտ 13.3 մլրդ դրամ, ցպահանջ ավանդներինը՝ 0.1 % կամ 0.1 մլրդ դրամ: Տեղի է նշել, որ վերը նշված ոչ բոլոր ցուցանիշների գծով էր աճ գրանցվել այս տարվա առաջին եռամսյակի ընթացքում. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) աճել էին 6.8 %-ով կամ 38.1 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 6.2 %-ով կամ 26.9 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 9.0 %-ով կամ 11.2 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել էին 6.7 %-ով կամ 33.2 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդներն աճել էին 9.4 %-ով կամ 19.7 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները նվազել 18.5 %-ով կամ 52.9 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին 7.9 %-ով կամ 34.4 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 6.4 %-ով կամ 21.3 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 12.7 %-ով կամ 13.1 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 0.8 %-ով կամ 3.2 մլրդ դրամով, այդ թվում՝

Ժամկետային ավանդները՝ 8.9 %-ով կամ 15.3 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները նվազել 5.7 %-ով կամ 12.1 մլրդ դրամով: Միաժամանակ փաստենք, որ ընթացիկ տարվա 1-ին կիսամյակում պարտավորություններն աճել են 7.2 %-ով կամ 122.8 մլրդ դրամով՝ նախորդ տարվա 14.0 %-ի կամ 173.7 մլրդ դրամի դիմաց, ընդ որում՝ ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել են 16.4 %-ով կամ 91.9 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 18.1 %-ով կամ 78.5 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 10.7 %-ով կամ 13.3 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները նվազել 4.0 %-ով կամ 19.8 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդներն աճել 15.8 %-ով կամ 33.0 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները նվազել 18.4 %-ով կամ 52.8 մլրդ դրամով: Համադրելու համար նաև նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) աճել էին 15.3 %-ով կամ 62.6 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 16.4 %-ով կամ 50.0 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 12.1 %-ով կամ 12.6 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 4.9 %-ով կամ 18.2 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 4.9 %-ով կամ 8.9 մլրդ դրամով, ցպահանջ ավանդները՝ 4.9 %-ով կամ 9.4 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդների) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 61.8 %-ը:

Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2012 թ.-ի մարտի 31-ի դրությամբ (մլրդ դրամ)




Համակարգում ժամկետային ավանդների
փոփոխման դինամիկան



Համակարգում ցպահանջ ավանդների փոփոխման դինամիկան

Մլրդ դրամ




Ընդհանուր կապիտալ

ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 1.7 %-ով կամ 6.5 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել 387.3 մլրդ դրամ, ընդ որում՝ ընդհանուր կապիտալն այս տարվա առաջին եռամսյակում ավելացել էր 1.5 %-ով կամ 5.7 մլրդ դրամով, իսկ 1-ին կիսամյակում՝ 3.2 %-ով կամ 12.2 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակում ավելացել էր 1.2 %-ով կամ 4.0 մլրդ դրամով, իսկ 1-ի կիսամյակում՝ 6.7 %-ով կամ 22.2 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից չբաշխված շահույթի (եկամուտների պահուստը) ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 11.4 %-ով կամ 13.7 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել մոտ 134.6 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 34.8 %-ը, ընդ որում՝ նախորդ տարվա երկրորդ եռամսյակում վերոնշյալ ցուցանիշը նվազել էր 2.9 %-ով կամ 3.4 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, ընթացիկ տարվա ինչպես առաջին եռամսյակում, այնպես էլ երկրորդ եռամսյակում փոփոխություն չի կրել և եռամսյակի վերջում կազմել 233.9 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 60.4 %-ը: Տեղին է նշել, որ կանոնադրական կապիտալի աճը նախորդ տարվա երկրորդ եռամսյակում կազմել էր 7.3 % կամ 15.4 մլրդ դրամ, իսկ 1-ին կիսամյակում՝ 11.1 % կամ 22.6 մլրդ դրամ:

Համակարգում կապիտալի և կուտակված շահույթի փոփոխման դինամիկան

Մլրդ դրամ



Եկամուտներ եվ ծախսեր

Ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 86.6 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 74.3 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա երկրորդ եռամսյակի ընդհանուր եկամուտները կազմել էին 61.7 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 47.6 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ հաշվետու կիսամյակում համակարգում ապահովվել է 161.0 մլրդ դրամի եկամուտ և կատարվել 138.1 մլրդ դրամի ծախս, որոնք 2011 թ-ի 1-ին կիսամյակի համանուն ցուցանիշները գերազանցել են համապատասխանաբար 34.84 %-ով կամ 41.6 մլրդ դրամով և 48.76 %-ով կամ 45.3 մլրդ դրամով:


Շահույթ

ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 9.33 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2011 թ.-ի նույն ժամանակամիջոցում ապահոված մաքուր շահույթի ծավալին զիջում է 1.41 մլրդ դրամով: Ասվածին նաև ավելացնենք, որ այս տարվա առաջին կիսամյակում համակարգում ապահովվել է 17.88 մլրդ դրամի մաքուր շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի՝ 21,23 մլրդ դրամի դիմաց:

Ամփոփ ցուցանիշներ

2012-ի առաջին կիսամյակի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, հունիսի 30-ի դրությամբ կազմել է 4.7 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 0.85 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության նվազում անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն նվազել է 1.65 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 0.39 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



2012 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ հիմնական ցուցանիշներն՝ ըստ բանկերի,
դրանց աճը/նվազումն երկրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

Հ/Հ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրա- ված տեղը համա կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվա զ (%)	Կուտ. շահույթ/ վնաս	Զբաղ. շահույթ II-եր.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱՎԲԱ Բանկ	239800,9	8,8	1	172057,6	7,8	192470,3	10,5	1	44918,8	27,5	47330,6	2,3	1	30000,0	0,0	8411,6	1044,2
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ	197690,8	7,6	3	129845,0	6,9	164349,2	8,4	3	43013,7	0,6	33341,6	3,4	3	10439,0	0,0	21574,3	1722,8
3	Արդշինհիմվեստբանկ	176707,0	11,5	6	116329,3	8,3	143765,6	13,1	6	45843,5	2,4	32941,4	5,0	4	15513,6	0,0	13283,7	1051,4
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	181489,8	-9,6	5	151526,0	-3,2	151783,8	-11,6	5	45711,3	10,3	29706,0	2,7	5	13906,2	0,0	12029,6	887,4
5	Կոնվերս Բանկ	95386,1	7,7	10	60445,1	12,5	78226,9	8,7	10	24428,0	8,0	17159,2	3,4	9	4923,3	0,0	8387,0	701,0
6	Յունիբանկ	132457,4	6,3	7	92851,2	1,6	114734,5	8,0	7	59312,8	2,0	17722,8	-3,2	8	11400,7	0,0	6487,4	318,4
7	Հայէկոնոմբանկ	59771,0	1,6	14	35083,0	-4,7	50790,2	2,4	14	12980,0	5,1	8980,8	-2,5	18	2333,3	0,0	1149,8	64,2
8	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	221858,7	12,0	2	159146,4	12,1	185216,6	14,1	2	39795,2	12,1	36642,1	2,5	2	25477,3	0,0	11081,0	1527,3
9	Ինելիդբանկ	93370,3	8,5	11	74992,9	12,5	76956,7	9,7	11	16469,7	9,5	16413,6	3,3	10	7894,4	0,0	5044,8	790,9
10	Հայքիզնեսբանկ	183423,4	14,2	4	121633,9	9,2	162232,8	17,9	4	57308,3	20,1	21190,7	-8,0	6	17500,0	0,0	3337,5	-1264,1
11	Անելիք Բանկ	76880,4	7,7	13	45028,7	5,9	62684,1	11,5	13	22456,4	14,5	14196,3	-6,5	12	14300,0	0,0	41,2	-851,5
12	Առէլսիմբանկ	115589,1	7,5	8	90919,8	9,5	99349,8	8,5	8	18360,7	11,0	16239,3	1,8	11	12347,3	0,0	3578,2	292,8
13	Արցախբանկ	81083,3	18,0	12	56480,4	8,8	68992,3	19,2	12	11488,5	11,3	12090,9	11,5	14	6561,2	0,0	3436,3	561,3
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	109400,7	7,1	9	81899,5	82,6	95389,7	7,2	9	14876,7	15,3	14011,0	6,5	13	7148,0	0,0	6091,7	995,4
15	ԱրմՍվիսԲանկ	48622,5	6,5	15	26916,8	6,9	37354,2	7,7	15	3847,5	7,9	11268,3	2,7	15	7002,0	0,0	2654,6	439,1
16	Զարգ. Հայկական Բանկ	44678,0	15,8	17	31951,6	16,3	36500,2	19,4	16	22566,6	25,8	8177,8	2,0	19	4556,7	0,0	3230,1	197,6
17	Պրոմեթեյ Բանկ	43837,8	5,8	18	29033,4	3,7	24352,4	8,3	19	6690,4	32,8	19485,4	2,9	7	14400,0	0,0	4989,1	597,1
18	Բիբլոս Բանկ Հայաստան	45251,4	10,3	16	35574,3	12,9	36223,0	13,2	17	12086,2	19,6	9028,4	-0,1	17	8382,2	0,0	665,3	55,0
19	ԲՏԱ Բանկ	9771,3	-0,6	21	5118,1	-7,7	4246,9	-2,3	21	1818,3	9,2	5524,5	0,8	20	6520,0	0,0	-1014,0	48,5
20	Պրոկրեդիտ Բանկ	34859,6	10,8	19	28177,6	11,9	29633,3	13,4	18	8880,5	10,3	5226,3	-1,8	21	6490,0	0,0	-1263,7	-94,3
21	Սելլաթ Բանկ	17150,4	-0,4	20	5750,8	41,5	6545,0	-4,6	20	81,5	67,0	10605,4	2,5	16	6850,0	0,0	3523,8	249,2
	Ընդամենը	2209079,9	7,5		1550761,4	9,5	1821797,5	8,8		512934,6	11,2	387282,4	1,7		233945,2	0,0	116719,3	9333,7